

## ԴԱԼԻԹԻ ԵՒ ՀԵՐԻՍԱՆ

1

Դաւիթ հոկան մի բարտի ծառ թեւկն՝  
Կէս օրուան մօտ, ամառնային բարկ արեւին,  
Անձայր նախիրն առաջ տարաւ, քշեց դնաց  
Ծովասարի պաղ աղբիւրի ջրէ վրայ, —  
Ծողքից շոյուել, թխացել էր գէմքը նրա:

2

Զրին նայող ժայռի շուքին տակը քնած՝  
Խոմփում էր նորափըթիթ մի դուարած,  
Դաւիթի քայլից հողը թնդաց, ժայռը ցնցուց,  
Դուարածը քնած տեղից ելաւ նստեց:  
— Բարի օր քեզ, այ նախրապան,  
— Ասաց Դաւիթը սրտատաք, —  
Արի ես դու ախպէր գառնանք,  
Ախպօրից լաւ կա՞յ ուրիշ բան,  
Ասաց, քարտին գրեց մի կողմ, նստեց անձայն,  
Եւ երկու սիրո յար-յաւիտեան եղբայրացան:

3

Սա գո՞րծ է, թէ՞ կրակ ու բոց, —  
Ասաց Դաւիթն իր ընկերոջ, —  
Շատ քաղցած եմ, ի՞նչ տի ուտենք,  
Այծ էլ չկայ, թէ խորովենք:  
— Մեր գիւղումը ցաման ժամ է, Դաւիթ ախպէր,  
Ողջ աշխարհը մեր ժամտունն է եկել թափուել,  
Դու կաց էստեղ, նախրին նայիր, իսկ ես երթամ  
Համ հաց բերեմ, համ հարիսա, համ թթու թան:  
— Ախպէր, — ասաց, — էղքան երկար ո՞նց համբերեմ,  
Դու տեղդ կաց, ես տի երթամ առնեմ բերեմ:  
Եւ իր ցուպը առաւ Դաւիթը նախրապան՝  
Քառսուն գեազնոց քայլով քոնեց գիւղի ճամբան:

4

Ժամի բակում, պարզ երկնքի աստղերից շատ,  
Հաւաքուել են ծեր, պատանի, երիտասարդ,  
Քլքլթում են կաթսաները՝ լի հարիսա.  
— Բախաս բանեց, ժամանակին եկայ հասայ, —  
Ասաց Դաւիթն ու մօտեցաւ մեծ կաթսային,

Զեռքը գրեց ճաշը խառնող կնկայ ուսին .  
— Տատիկ, — ասաց, — մի քառա հաշ չե՞ս տայ Դաւթին :  
Տատն ուղղուեց, նայեց, ասեց Արարատին :  
— Քեզ որ չտամ, էլ ո՞ւմ տի տամ, կարիճ Դաւթիթ,  
Սուսան տատը մատաղ լինի քո աչքերին :  
Բայց էն կազմից հասաւ ժամհարը դդմաքիթ,  
Բարեւ տուեց, ասաց շողոմ .  
— Կա՛ց, ա՛յ որդի, վրագ չե՞ս խոմ,  
Թող պատարազն ելնի, այնժամ,  
Վկայ լինի Աստուածն արդար,  
Ինչքան կ'ուղես՝ լցնեմ ու տամ,  
Թէ՛ դու կուշտ կեր, թէ՛ առ ու տար :  
— Պատարազին ո՞նց սպասենք, քեռի ժամկոչ,  
Նախրորդ մարդ ենք, ունենք հաղար կարիք ու դործ,  
Զէ՛, վրազ եմ, տաւարս անտէր  
Թողել եմ ես սար ու հանդեր,  
Կ'երթան կ'ընկնեն հասած արտեր :  
Ասաց եւ իր կենացլուխ մահակ-բարտին  
Մօտեցրեց մեծ կաթսայի երկու կանթին,  
Դրեց թեւին, ձեռքը բոնեց մի կարաս իւղ,  
Մարդկանց ծովը ճեղքեց անցաւ վեհ, աներկիւզ,  
— Բարով մնաք, ուկտաւարներ, ժամ, պատարագ, —  
Ասաց մտքում եւ արշաւեց հողմից արագ :  
Հասաւ, տեսաւ ընկերն աղի լաց է լինում :

## 5

— Ինչո՞ւ, — ասաց, — լաց ես լինում, Սանասար ջան :  
Նախրապանը պատասխանեց ողորմաձայն :  
— Դաւթիթ, դու զեռ Սեւ Զորից դուրս չէիր եկել,  
Երբ եօթը դեւ, ինչպէս եօթը դաղաղած դէլ,  
Ա՛յ, տեսնո՞ւմ ես, էն ամպամած սարից իջան  
Եւ մեր նախրից եօթն ընտիր եղ առան տարան .  
Ի՞նչ պատասխան տամ տէրերին, ա՛յ Դաւթիթ ջան :  
— Հե՞ր ես լալիս հոնդուր-հոնդուր հանց երախայ,  
Որ էդպէս ես, դու տուն գնա ու ճան խաղա,  
Թեթեւ քամուց մի թեքուիր դու ինչպէս նոր տունկ,  
Հաստատ կաց միշտ ինչպէս սարը մեր Մարութուք,  
Էն դեւեր ո՞ւր գնացին, ճամբան ցոյց տուր :  
— Սարն ելան, — ասաց ընկերն աղեկտուր :  
— Թող հարիսան մնայ էստեղ, մինչեւ երթամ

Քո թալանուած եղներն առնեմ, բերեմ, քեզ տամ,  
Նոր գանք, նստենք, անուշ անենք մեր հարիսան,  
Վտանդի դէմ եղիր տոկուն ու անսասան:

## 6

~~ԱՐԵՒ  
327~~  
Դաւթի ձայնի արձագանգը լսում է դեռ.  
Երբ նա հասաւ սարի գլխին մի կանաչ տեղ,  
Եւ ի՞նչ տեսնի... Աւազակները փառայեղ  
Գլխատել են տարած եղներն անուանի,  
Կտրատել են, լցրել կաթսան եօթ կանթանի,  
Կրակ վառել, կաթսան դրել են կրակին,  
Մաշազատիկ կրակի շուրջը բոկորմկը,  
Զրուցում են եւ սպասում են անհամբեր, —  
Միսը փրփրում, եռում է, բայց դեռ չի եփել:  
Սպասում են... Մէկ էլ յանկարծ ինչպէս որոտ,  
Լսուեց Դաւթի մոնչիւնը մեծադղորդ.

~~ԱՐԵՒ  
375~~  
— Աւազակներ, ո՞ւմ նախրից էք եղ գողանում,  
Դուք չէ՞ք լսել էն Զոշանց տան Դաւթի անուն,  
Դե՛հ, պատրաստուէ՛ք, զէնքերդ առէք, իջէք մէյդան,  
Ես եմ որ կամ էն ծուռ Դաւթը Զոշանց տան:  
Դեւերն ելան, գուրգերն առան, զէնք կապեցին,  
Ամէն կողմից Սասմայ ծոփն օղակեցին.  
Իրար դիպան ահեղ ամպերը շանթածին.  
Եօթը անդամ ելաւ, իջաւ Դաւթի բարտին.  
Եւ եօթը դեւ շառաչիւնով փռուեց գետին:

## 7

~~ԱՐԵՒ  
4329~~  
Եկաւ կանդնեց գիւղամիջում Դաւթը քաջ  
Եւ սարերը շարժող ձայնով կանչեց յանկարծ.  
— Սասունցիներ, ուխտաւորներ, լսէ՛ք ինծի,  
Ես փոխարէն ձեր էն անկանթ հին պղնձի  
Հազար փթնոց մի պղինձ եմ բերել ընծայ,  
Ո՛վ տիրել էր, թող ծափ զարկի ու կուշտ ցնծայ.  
Փոխարէն ձեր հարիսայի բերել եմ ես  
Մորթուած, եփած եօթը պարարտ, անարատ եղ,  
Կին, տղամարդ, հաւաքուցէ՛ք, եկէք տարէք,  
Գիշեր ցերեկ ազատ կերէք ու քէֆ արէք:  
Կաշիներն էլ խեղճ աղքատները թող հազնին,  
Թող Սասունում ուրախանան սրտերն ամէն,  
Երկար արեւ ցանկան Զոշանց առիւծ Դաւթին,  
Որ միշտ պաշտպան կանդնի իրենց արդար դատին:

